ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՄԵՋԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Հասցե՝ գ. Անտառամեջ
Հեռ. / +374/94 01-83-83
E-mail antaramedj.dpr@gmail.com
24 սեպտեմբերի 2025թ.

Ե- 79

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Մեծարգո պարոն Սարգսյան.

Տեղեկացնում եմ Ձեզ, որ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Անտառամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը հայտարարել է մրցույթ՝ «տարրական դասարանի ուսուցչի՝ դասվարի տասնինը, «Բնություն» առարկայի՝ չորս, «Բնագիտություն» առարկայի՝ երեք, «Կենսաբանություն» առարկայի՝ երկու դասաժամերի ուսուցիչների թափուր տեղի համար, որը 2025 թվականի սեպտեմբերի 22-ին հրապարակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պաշտոնական կայքէջում:

Մրցույթը տեղի կունենա 2025 թ. հոկտեմբերի 6-ին՝ ժամը 10:00-ին՝ Գեղարքունիքի մարզի Անտառամեջի միջնակարգ դպրոցում:

Կից ներկայացնում եմ հայտարարության տեքստը :

Առդիր մեկ էջ:

Տնօրեն՝ Ա. Ազարյան

Digitally signed by AZARYAN ARTUR 2909810402
Date: 2025.09.24 17:52:09 AMT

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մրցույթ՝ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Անտառամեջի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության **տարրական դասարանի ուսուցչի՝ դասվարի տասնինը, «Բնություն» առարկայի՝ չորս, «Բնագիտություն» առարկայի՝ երեք, «Կենսաբանություն» առարկայի՝ երկու դասաժամերի ուսուցիչների թափուր տեղերի համար:**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափսի,

2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (միջին մասնագիտական կրթություն ունեցող և կամավոր ատեստավորում անցած ուսուցչի կողմից դպրոցի թափուր տեղի մրցույթին մասնակցելու դեպքում՝ միջին մասնագիտական կրթության փաստաթուղթ),

3) անձը հաստատող փաստաթուղթ,

4) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ առկայության դեպքում,

5) ինքնակենսագրություն (Ձև 5),

6) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

7) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ,

10) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի ապրիլի 28-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգին համապատասխան՝ հաստատությունից դուրս մնացած լինելու դեպքում՝ կամավոր ատեստավորումից 60 և ավելի տոկոս արդյունք ցուցաբերած լինելու մասին տեղեկություն (մասնակցած լինելու դեպքում).

11) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (առկայության դեպքում նաև՝ 2-րդ կետի) պահանջվող համապատասխան փաստաթուղթ.

12) «Հանրակրթության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի պահանջին համապատասխան տեղեկանք՝ բարձրագույն ուսումնական հաստատությունից:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2025 թվականի **սեպտեմբերի 22-ից մինչև հոկտեմբերի 3-ը** ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 17:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2025 թ. հոկտեմբերի 6-ին՝ ժամը 10:00-ից** Գեղարքունիքի մարզի Անտառամեջի միջնակարգ դպրոցում, հասցե՝ Անտառամեջ բնակավայր 2-րդ փողոց շենք 11:

Տեղեկությունների համար զանգահարել 094-01-83-83 հեռախոսահամարով: